Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԼՂՀ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է ուղղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորընտիր նախագահ տիար Բակո Սահակյանին, որում ասվում է. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում Ձեզ և շնորհավորում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ ընտրվելու առիթով:*

Գոհություն ենք մատուցում Աստծուն, որ խաղաղության մեջ Արցախի մեր ժողովուրդը կառուցում է իր ազատ կյանքը՝ հայրենի երկիրը շենացնելու, ապահով, բարօր ու երջանիկ ապրելու հավատով:

Արցախահայության և ողջ մեր ժողովրդի այս հույսերն ու ձգտումը իրականություն դարձնելու արդար գործին Դուք բերել եք Ձեր ջանքերն ու նվիրումը՝ նախանձախնդրորեն մասնակցելով Արցախի ազատագրությանն ու պետականության կայացմանը:

Աղոթում ենք առ Տերը Բարերար, որ Իր շնորհի ներքո հարատև խաղաղության մեջ պահպանի Արցախը և արգասավորի Ձեր և հավատավոր մեր ժողովրդի ջանքերն ու ներդրումը, որպեսզի ապաքինվեն հայրենի հողի բոլոր վերքերը, բարձրանան մեր բոլոր սրբատեղիները, Արցախը լցվի շենությամբ ու խնդությամբ: Մաղթում ենք Ձեզ, մեծարգո Նախագահ, քաջառողջ կյանքի երկար օրեր, կորով ու եռանդ Ձեր բարձր պաշտոնում և հաջողություններ՝ Ձեր ծրագրերին ու ձեռնարկումներին»:

Ս. Էջմիածին,
20 հուլիսի 2007 թ.